ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 հոկտեմբերի 2019 թվականի N97Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 23-րդ, 54-րդ, 56^2-րդ, 244^9-րդ և 305-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ կետի, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդված 3-րդ կետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության 2019թվականի հոկտեմբերի 4-ին կազմված «Հողերի օգտագործման և պահպանման խախտումների» N18 ակտի 1-3 մասերի,

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ կիրառելով «տուգանք» վարչական տույժը.
   1.1 հողամասերի նպատակային և գործառնական նշանակության ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհիս-նապատիկի չափով.
   1.2 համայնքային սեփականության հողամասերը քաղաքաշինական և հողաշինարարական նախագծերին չհամապատասխանող նպատակային կամ գործառնական նշանակությամբ օտարելու համար՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:
2. Վարչական իրավախախտումների համար կիրառված տուգանքները 15-օրյա ժամկետում ենթակա է մուտքագրման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 900005001517 հաշվեհամարին:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

04.11.2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: Ekeng CISC

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 30
ք. Կապան